ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2014թ. մարտի 31 N 39- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<Վ. ՍԱՍՆԱՇԵՆԻ Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՍՈՐԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԳԱՌՆԱՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԴԴՄԱՍԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐԻ Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԱՐԱԳԱԾԱՎԱՆԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԱՐՏԵՆԻՀԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները. ***կարգադրում եմ***՝

1. 2014 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Վ. Սասնաշենի Մ. Մանուկյանի անվան հիմնական դպրոց>>, <<Սորիկի հիմնական դպրոց>>, <<Գառնահովիտի միջնակարգ դպրոց>>, <<Դդմասարի հիմնական դպրոց>>, <<Կաթնաղբյուրի Մ.Գալշոյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոց>>, <<Արտենիի թիվ 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2011, 2012 և 2013 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ՝ խմբի ղեկավար Իշխան Բարսեղյանի, Արիս Թովմասյանի, Սիրան Ասատրյանի և Կարեն Սուքիասյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 26 աշխատանքային օր՝ սկսելով աշխատանքները սկսել 2014 թվականի ապրիլի 1 -ից ավարտել 2014 թվականի մայիսի 12-ին:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ